

«ՀԱՂԱՐԱՊԵՏ» ՏԵՐՄԻՆԻ ՄԱՍԻՆ

Ս.-Ա. Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ

«Հաղարապետ»-ը հայկական աղբյուրներում հաճախակի հիշատակվող յոթերմին է: Այն իր կազմությամբ թեպետ նշանակում է հաղարի պետ, սակայն ընդհանուր առմամբ ավելի քաղաքական տերմինի իմաստ ունի, քան թե զինվորական¹:

Հայաստանում այդ մակդիրի տակ հիշվողի և համանուն պաշտոնը զբաղեցնողի պարտականությունների և իրավունքների մասին կան տարբեր կարծիքներ: Հայկական արքունիքում հաղարապետը եղել է երկրի կառավարման ղեկի մոտ կանգնած երկրորդ անձնավորությունը թագավորից հետո, և կամ առաջին գործակալը, արքունիքի և մեբողջ երկրի տնտեսության կառավարիչ— տեսչության²— նշանակված թագավորի կողմից, և այս պաշտոնը ժառանգական է դարձել IV դարում³: Ըստ այլոց՝ նրա պարտականությունների մեջ մտել են նաև հարկահանությունը, հողի մշակությունը, ոռոգման գործը և ընդհանրապես երկրի շեն վիճակի մասին հոգ տանելը⁴: Ինչ-որ ժամանակ Հայաստանում հաղարապետը և մարդպետը նույնն են եղել⁵: Ասված է նաև, թե Հայաստանի պատմության վաղ շրջանում, հաղարապետին է վստահված եղել նաև թագավորի անձի ապահովումը՝ տեսչության գլխավորի հետ միասին, այսինքն այնպես, ինչպես եղել է արեմենյան արքունիքում⁶: Արտաշեսյանների ժամանակ հաղարապետը գուցե կատարել է նաև սպարապետի պարտականությունները, երբ գերագույն զինվորական առաջնորդը համարվում էր թագավորը⁷:

Սույն գործակալությունը կարող էր փոխառված լինել կամ Աթենքյաններից՝ Երվանդունիների միջոցով և կամ Սելևկյաններից, որոնց մոտ այդ պաշտոնը «խիլարխիա» անվամբ և հայկական հար և նման բովանդակությամբ ընդունված է եղել ամենավաղ ժամանակներից⁸:

Հայկական հաղարապետի մասին կա դեռևս չհիմնավորված մի բացատրություն, ըստ որի Նղիշեի մոտ հիշված «ամբոսեան» անհասկանալի բառը «նշանակում է հաղարապետ, ժողովրդի և շինականների տնտեսության խնամակալ»: Ըստ այդ վարկածի հայերը ալդաեղ զանց են առել գործածել «հալարապետ»-ը, որպեսզի տարբերեն նրա հունական համարժեք չալաբուզ-ի իմաստավորումից. վերջինս չէր տա հայոց հաղարապետի նշանակությունը⁹:

1 Ղ. Ինճիճյան. Հնախոսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի. հ. Բ, Վենետիկ, 1835, էջ 277:

2 Նույն տեղում, էջ 69: Նաև՝ Ս. Տ. Еремян. Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1948, № 11, էջ 69—70:

3 Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Երևան, 1971, էջ 831:

4 Հ. Մանանդյան. Ֆեոդալիզմը հին Հայաստանում. Երևան, 1934, էջ 69:

5 Ղ. Ալիշան. Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց. Վենետիկ, 1890, էջ 419:

6 Գ. Ա. Тирацян. Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии.—Պատմա-բանասիրական հանդես, 1972, № 2, էջ 105:

7 Ս. Տ. Еремян. Указ. соч., с. 70:

8 Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, էջ 675:

9 Ս. Ս. Մալխասյան. Ներշնչություն «Ամբոսեան» և Բուվանդարան Պատմությունը բառերի մեկնությունը.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1947, № 4, էջ 91—92:

ինչպես սոցիալական վերնախավ արտահայտող մի շարք այլ տերմիններ, «Հաղարապետ»-ը ևս փոխ է առնված իրանականից՝ հին պրսկ. hazahrapati, պհլ. hazarapat, պրսկ. hazarabad¹⁰։ Պարսկական սուլն տերմինը հունական աղբյուրների մեջ տառադարձված է՝ ἄζαραπατίς, ἄζαբαբίτις, ἄζαροպ- և այլն։ Սակայն վերոհիշյալ ձևերը շատ հազվադեպ են օգտագործված հին հունական աղբյուրներում և շուտով իրենց տեղը զիջել են նրա հունարեն պատճենին՝ γιλαργός-ին, որը հաստատուն կերպով տեղավորվում է՝ նախ հելլենիստական, ապա և ամբողջ հունահռոմեական աշխարհում։

Իսկ ինչպիսի՞ սոցիալական իմաստավորում է ունեցել hazarapat— ἄζαραπατίς— γιλαργός տերմինն ընդհանրապես։

Այս հարցին է նվիրված Յ. Մարկվարտի Philologus աշխատության 6-րդ գլուխը¹¹, որտեղ γιλαργός-ը՝ հին պարսկերեն hazahrapati՝-ը կապում է Հերոդոտի աշխատության 7 գլխի § 83-ում հիշվող ἄναγχοι—անմահների դնդի հետ։ Այդտեղ հետևյալն է ասվում. «Տասը հազար ընտիր պարսիկներին ղեկավարում էր Հիդառնեսի որդի Հիդառնեսը։ Այդ մարտիկները պարսիկների մոտ կոչվում էին «անմահներ», հետևյալ պատճառով. երբ նրանցից որևէ մեկը հիվանդության կամ մահվան պատճառով հեռանում էր շարքերից, նրան փոխարինողը արդեն ընտրված էր։ Այսպիսով «անմահների» թիվը ո՛չ ավելանում էր, ո՛չ էլ պակասում»։

Այստեղից, թերևս, կարելի է եզրակացնել, որ Հիդառնեսը պետք է կոչվեր γιλαργός (հաղարապետ), սակայն հետազոտումից պարզվեց, որ Հիդառնեսը Հերոդոտի մոտ բոլոր դեպքերում հիշվում է որպես σαρπηγός և ոչ որպես γιλαργός¹²։

Այդպես է հենց վերոհիշյալ 7, 83-ի նախորդող տողերում. σαρπη γοι σαρπηγός τού σὺμπαντος πεζού γωρίς τὸν μύρον¹³։

Պետք է վկայակոչել նաև ցարդ հաշվի չառնված այն փաստը, ըստ որի, պատմիչը հունական հազար հոգուց բաղկացած զորաբաժնի հրամանատարին նույնիսկ հաղարապետ չի անվանում, այլ՝ σαρπηγός։ Այսպես, 6, 92-ում ասվում է ἐθέλονταί θε ες γίλιους ἴγχε θε σὺτους σαρπηγός ἀνὴρ ὁ σὺν σμα Εὐρύβατος¹⁴։

Այսպիսով, գրեթե բացառվում է Հիդառնեսին հաղարապետ կոչելու հնարավորությունը, քանի որ Հերոդոտը նրան բնութագրում է որպես տասը հազար ընտիր պարսիկների հրամանատար. այդ հազարյակներից յուրաքանչյուրի ղեկավարը պետք է կոչվեր հաղարապետ, ինչպես ճիշտ նկատել է Մարկվարտը։

Սակայն վերապահելի է նրա այն գրույթը, թե «այս տիտղոսը սովորաբար 1000 տիգավոր (μυλλόφοροι) կամ նիդակավոր (δερυφόροι) ընտիր թիկնապահաց հրամանատարին սեպհական էր, ու միանգամայն ամբողջ բանակին կր հրամայեր»¹⁵։ Հակասությունը նրանում է, որ Հիդառնեսը, լինելով տասը հազարի հրամանատարը և հրամայելով ամբողջ բանակին, «հաղարա-

10 Հ. ր. Աճառյան. Արմատական բառարան. հ. 9, Երևան, 1977, էջ 6—7։

11 SL^u 3. Մարկվարտ. Հետազոտությունը Իրանա պատմության.—«Հանդես ամսօրյա», 1889, էջ 316—320։

12 SL^u Herod., 3, 70. 6, 133. 7, 66, 83, 135, 211, 215, 218. 8, 113, 118։

13 «Սրանք էին զորավարները (սարպիդ) ամբողջ հետևակին, առանց բյուրավորների»։

14 «Կամավորներն են հազար, նրանց առաջնորդում էր այս տղամարդ զորավարը (սարպիդ) անվանված Եվրիբատես»։

15 Մարկվարտ. Նշվ. աշխ., էջ 316։

պետ» չի կոչվում։ Ուստի պետք է ենթադրել, որ այլ է Հիդառնեսի և այլ՝ հազարապետի պաշտոնը, որով հարցականի տակ է ընկնում «հազարապետի» զինվորական իմաստավորումը։

Հյուբըմանը, հենվելով Կոռնելիոս Նեպոսի հաղորդմանը, ըստ որի «հազարապետը պետության երկրորդ տեղն էր գրավում» (Կանոն Գլ. 3), գտնում է, որ թեև հազարապետը զինվորական աստիճան է ցույց տալիս, սակայն «չայտ է ի պատմության, թե քաղաքական աւագադոյն պաշտօնատարն էր, որ ամենայն իշխանութիւն կը վարէր յանուն արքայի»¹⁶։

Հազարապետի վերաբերյալ առանձին հոգովածով հանդես է եկել Պ. Յունգեն, որը Պերսեպոլիսի պեղումներից գտնված երկու բարձրաքանդակների հիման վրա, ինչպես նաև հույն պատմիչների ընձեռած տեղեկությունների համեմատ, փորձել է պարզաբանել, որ «հազարապետ»-ը հունարեն *γυναικας*-ն է, և այսպես է կոչվում թագավորական թիկնապահների հազար հոգույ բաղկացած խմբի հրամանատարը, սակայն միաժամանակ գիտում է, թե հազարապետի էության ճշգրիտ և ուղղակի իմացությունը դեռևս չի պարզված¹⁷։ Իր ծավալուն հոդվածում Պ. Յունգեն հանգում է նաև այն եզրակացության, որ հազարապետը ոչ միայն ռազմական պաշտոն է, այլև ֆինանսական, քաղաքական, հարկահավաքի և որ իրանական այս պաշտոնը Աքեմենյանների ժամանակի երևույթ է և Ալեքսանդր Մեծի *γυναικας*-ները նույնն են պաշտոնով, ինչպիսիք են հազարապետները պարսկական կառավարման սիստեմում¹⁸։

Ն. Ադոնցը գտնում է, որ «հազարապետ»-ը զինվորական տերմին է և քաղաքական ասպարեզ է տեղափոխվել Աքեմենյանների ժամանակ։ Ըստ Քսենոֆոնի հաղորդման (Կյուրոպեդիա. 8, 1, 14), պետության հսկայական ֆինանսական ծախսերը կարգավորելու համար Կյուրոսը որոշեց պետության տնտեսական սիստեմում զինվորական սիստեմ մտցնել՝ նշանակելով լուխագոսներ, խիլիարխներ և միրիարխներ, որոնցից էլ խիլիարխ-հազարապետը ղառնում էր պետական եկամուտները կարգավորող բարձրագույն պաշտոնյա¹⁹։ Պետք է կարծել, որ հենց այստեղից էլ սկսվում է հազարապետի զինվորական պաշտոնի երկփեղկումը և թեթումը դեպի տնտեսական ասպարեզ։

Նաև այն տրամաբանորեն նմանօրինակ երկփեղկում պետք է մտնի նաև լուխագոսների, դիկադարխների, միրիարխների պաշտոնների մեջ. որոնց հիշում է Քսենոֆոնը, որոնք, սակայն, ինչքան հայտնի է մեզ, կառավարման ընդգծված տնտեսական թեթում ունեցող պաշտոն չեն զբաղեցրել, ինչպես հազարապետը։ Ծիշտ է, հույն պատմիչների մոտ *γυναικας*-ը ավելի զինվորականի երանգավորում ունի, որը առաջ է գալիս հունական միջավայրում նրա պաշտոնի իմաստավորման որոշ փոփոխություններից, սակայն այստեղ ևս կան փաստեր, որոնք վկայում են *γυναικας*-ի նաև տնտեսական ղեկավար լինելու մասին։

Խոսելով Կարթագենի դեմ հռոմեացիների մղած պատերազմի մասին, Պոլիբիոսը ասում է. «Բացի այդ, այն ժամանակ, հազարապետները (*γυναικας*) [ռազմական] ավարն էին տնօրինում, իսկ հռոմեացիների զորավարը (*ὁ στρατηγος*) գերիների հավաքված բազմությունը, որը այնպես պատահեց, որ [քանակով] բյուրից քիչ պակաս ստացվեց, կարգադրեց նախ բաժանվեն քաղաքային այրերը, կանայք և նրանց որդիները, իսկ ապա՝ արհեստավորները»²⁰։

¹⁶ [Հյուբըման]. Քան մի պարսկերեն բառեր ի Պատմության եղիչի.---«Բազմավեպ», 1895, էջ 145—146։

¹⁷ P. J. Junge. Hazarapatis.—Klio, 33 (15) № 2, 1940, p. 15—6.

¹⁸ P. J. Junge. Op. cit., p. 37—38.

¹⁹ Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, СПб., 1908. с. 445—446.

²⁰ Polyb., X, 17, 6.

Եթե ընդունենք, որ չլուսթյոս-ները հոմեական բանական էին գտնվում, ապա նրանք, ինչպես ասվում է, տնօրինում էին վերցված ավարի տնտեսությունը, իսկ ԾԵՐԱՆՆԵՐ-ը գերիների բազմության հարցն էր լուծում: Դիողորոս Սիկիլիացին, պարսկական Բագոաս Հաղարապետին, որպես պետության կառավարման ղեկի մոտ կանգնած մի անձնավորության, հետևյալ կերպ է բնութագրում. «Հաղարապետ (չլուսթյոս): Բագոասը, որը թեպետև իր հատկություններով ներքինի էր, բայց իր էությունը խորամանկ ու ռազմասեր, ինչ-որ բժշկի օգնությամբ թունավորելու միջոցով սպանեց Օրոսին և թագավորությունը հանձնեց արքայի ամենակրտսեր որդուն՝ Արսեսին»²¹:

Նույն պատմիչի կողմից հիշված և հունական միջավայրում գործող հաղարապետ-չլուսթյոս-ներն իրենց գործունեությամբ էական տարբերություն չունեն պարսկականից: Եթե թագավորական բանակի հրամանատար նշանակված Անտիգոնոսը լիազորվում է պատերազմ վարել, ապա չլուսթյոս նշանակված Կասանդրը հսկում է հրամանատարի գործունեության վրա և երկրի կառավարման գործում ավելի բարձր իրավասություններ ունի²²:

Սույն և նման փաստերի անկախությունը մեզ թույլ չի տալիս համաձայնվելու այն եզրակացությանը, որը կտրուկ հակասություն է տեսնում պարսկական և հունական հաղարապետների միջև, ըստ որի՝ «հունամակեդոնացիների մոտ հաղարապետը պարզապես հաղար հոգուց բաղկացած զորամասի հրամանատարն էր, մինչդեռ Պարսկաստանում հաղարապետն ուներ արքունիքում բարձրագույն պաշտոն»²³:

Ուշագրավ է իրանագետների կողմից համեմատաբար վերջերս արված այն ենթադրությունը, ըստ որի պարզ չէ, թե հույների կողմից «անմահներ» բառը մտածված է օգտագործված, թե՞ այն արդյունք է հին պարսկերեն բառի ոչ ճիշտ թարգմանության²⁴: Այստեղ Հերոդոտի և կամ նրա տեղեկատուի կողմից շփոթվել է anūšya—կողմնակից, համախոհ. anauša—«անմահ»-ի հետ²⁵: Սույն ենթադրությունները ունեն հետևյալ հիմքը: «anūšiya նշանակում է համախոհ, հետևող (շքախմբի անդամ), օգնական (ըստ Հենինգի) համեմատել սոգդիերեն nūta-nul—օգնություն): Պալլարոյի կարծիքով սխալ է Հերոդոտի մոտ հիշված anaušya-ին տալ ԾԵՐԱՆՆԵՐ-ի պարսկական համարժեքը, որը թույլ է տրվել Հերոդոտի կողմից: Հերոդոտը շփոթել է anūšiya բառը, համարյա նույնահնչյուն anaušia—անմահ բառի հետ²⁶: Վերոհիշյալ ենթադրության հավանականության փաստարկման հարցում դուցե օգնի նաև այն, որ հին Հունաստանի Արգոս և Ակրագանտ քաղաքներում կային օչլոս կոչվող պետական բարձրագույն խորհուրդներ²⁷, որոնց անդամները, այն է՝ հաղարականները անվանվել են ոչ թե «անմահներ», այլ օչլոս²⁸, որը նշանակում է «ընտրանիք», «ընտիրք», «ընտրյալք»²⁹:

²¹ Diod., XVII, 5, 3.

²² Diod., XVIII, 39, 7.

²³ Ս. Կրկյաշարյան. Նախարարն ու նախարարությունները Հին Հայաստանում.— ՀՍՍՀ ԳԱ «Իրաբեր հաս. գիտ.», 1978, № 11, էջ 63:

²⁴ Р. Фрай. Наследие Ирана. М., 1972, с. 152.

²⁵ М. А. Дандамасев, В. Г. Луконин. Культура и экономика древнего Ирана, М., 1980, с. 233.

²⁶ W. Brandenstein, M. Mayrhofer. Handbuch des Altpersischen. Wiesbaden, 1964, S. 103.

²⁷ Thuc., V, 67. Diod., XII, 80. Diog. Laertius, VIII, 66.

²⁸ Thuc., V, 67.

²⁹ Δ. Δημητρίου. Μεγάλη Ελληνική Εγκυκλοπαιδεία, Τ. 5, σ. 4361: Նաև՝ Древнегреческо-русский словарь. Сост. И. Х. Дворецкий. М., 1958, т. I, էջ 1032:

Χιλίαρχος-ը, լինելով ուսումնասիրվող իրանական hazarapati տերմինի պատճենը, հունական կառավարման սխեմայի ներմուծվել Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակաշրջանում և իր նոր միջավայրում որոշ չափով փոփոխվել է, հիմնականում պահպանելով իր երբեմնի ընդգծված իմաստավորումը՝

«Հազարապետ»

Հայերեն	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու	սղիմամուհու
Հունարեն	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων	αρχιμαμων
Χιλίαρχος	47	1											1	49
οικονομος	11		4		6*	1	1	1	1	1	1		1	28
επιτροπος	3		1	1									2	7
ο ἐπὶ τῆς οἰκίας	3											1		4
ἐφεστυχιος	1													1
չկա հունարենում	1**													1
Ընդամենը	66	1	5	1	6	1	1	1	1	1	1	1	4	90

* Չուկ Ժ, 2. οἰκονομειν.

** Ցեսու իր. 30:

Եֆեստիացի-ը իր օգտագործման մնացած օրինակներում, հայերենում ստացել է՝ հաստատել, կացուցանել, գնացնել, յարեան, կուտել, էր և այլ համարժեքներ:

Տեսնենք, թե սույն տերմինը ինչպես է ընկալված և ինչ արժեքներ է ստացել հայերեն Աստվածաշնչում:

Դիմենք բերված աղյուսակի վերլուծությանը³⁰:

1. Հազարապետ — χιλίαρχος. — «Հազարապետ» տերմինը կիրառվել է ընդամենը 66 անգամ, որից 47-ը որպես χιλίαρχος-ի համարժեք, իսկ χιλίαρχος-ը, բացի դրանից, մեկ անգամ ստացել է «զօրագլուխ» համարժեքը, իսկ մեկ անգամ էլ հայերենում չկա այն պարբերությունը, որտեղ պետք է տրվեր տերմինի համարժեքը: Կարելի է եզրակացնել, մի կողմից, որ χιλίαρχος-ի հայերեն կալույն համարժեքը «հազարապետ»-ն է, իսկ մյուս կողմից, որ «հազարապետ»-ը հունարենում օգտագործված համարժեքի պատճենն է, քանի որ հայերեն «հազար»-ը համապատասխանում է χιλιά-ին, իսկ «պետ»-ը՝ թարգմանիչների կողմից կալույն կերպով ընդունված αρχος-ին: Իբրև տերմին ստույգ համապատասխանություն լինելով, արդյո՞ք օգտագործման բոլոր դեպքերում այն նաև իմաստային պատճենում է և ի՞նչ սոցիալական իմաստավորում ունի արտաքուստ թիվ արտահայտող այս տերմինը հունարենում ու ինչպե՞ս պետք է հասկանալ նրա հայերեն համարժեքը Աստվածաշնչում:

³⁰ Աղյուսակի ուղղահայաց № 1 սյունակը յուրյց է տալիս, թե «հազարապետ»-ը հունարեն տերմինի թարգմանության համար է օգտագործվել, իսկ մնացած սյունակները ցույց են տալիս, թե ինչպես են թարգմանվել հայերեն Աստվածաշնչում որպես «հազարապետ»-ի համարժեքներ հանգես եկած հունարեն տերմինները:

Այս հարցին պատասխանելու համար կոնտեքստային վերլուծություն կատարենք:

Հին Կտակարանում գտնվող կոնտեքստների մի ստվար մասում «Հազարապետ»-ը սոցիալական վերնախավի ամենաբարձր աստիճաններից մեկն է զբաղեցնում, բարձր դասվելով տասնապետից, հիսնապետից, հարյուրապետից և կարգվում է Մովսես մարգարեի կողմից, որպեսզի ժողովրդին առաջնորդեն ղեկի Ավետյաց երկիր: Վերոհիշյալները, ինչպես նշվում է Բ. Օրենք, Ա, 15 կոնտեքստում, եղել են ցեղապետներ «և առի ՚ի ձէնջ զցեղապետսն, արս իմաստունս և հանճարեղս, և խորհրդականս, և կացուցի զնոսա ՚ի վերայ ձեր, առաջնորդս, հազարապետս և հարիւրապետս, և յիսնապետս, և տասնապետս, և ատենադպիր դատաւորաց ձերոց»:

Ա. Մակար Գ, 55 այդ մասին ասվում է. «Յետ այսորիկ կարգել սկսալ լուղա զժողովուրդսն, և կացուց ՚ի վերայ նոցա իշխանս՝ հազարապետս, և հարիւրապետս, և յիսնապետս, և տասնապետս»: Այստեղ ցայտուն կերպով ասվում է այն մասին, որ նախ՝ հազարապետը (ինչպես նաև հարյուրապետը, հիսնապետը, տասնապետը) իշխանի համարժեք է դասվում և երկրորդ՝ վերոհիշյալները կարգված են ժողովրդի վրա որպես կառավարիչներ: Այդ միտքը հաստատում են նաև Յեսու ԻԲ, 21 և հատկապես Թիւք, Ա, 16 կոնտեքստները. «Սոքա են անուանիք ժողովրդեանն, իշխանք ցեղիցն ըստ նահապետաց հազարապետ իսրայելի», ինչպես նաև Յեսու ԻԲ, 14-ը, որով հաստատվում է, որ Իսրայելի հազարապետները «ըստ տանց նահապետաց» էին³¹: Այսպիսով կոնտեքստից պարզ երևում է, որ պատմաժամանակագրական այդ միջավայրում տոհմային, ցեղային միավորների առաջնորդները դառնում են «Հազարապետ», «Հարիւրապետ», «յիսնապետ», «տասնապետ» և «ատենադպիր դատաւորներին»:

Նույնպիսի և ավելի պարզ կերպով է արտահայտված սույն միտքը Բ. Մնաց. ԻԵ, 5-ում, որտեղ Հուդայի Ամասիաս թագավորը (մ. թ. ա. IX դար) «ժողովեաց զտուն Յուդայ, և կացուց նոցա ըստ տանց տոհմիցն իւրեանց հազարապետս, և հարիւրապետս...»: Թեև այս հավաքը ռազմական ուժը ի մի բերելու իմաստով է, սակայն այստեղ նախ նշվում է, որ հազարապետը և հարյուրապետը նշանակվել են «ըստ տանց տոհմից», որից հետո է, որ քսան տարեկան հասակից վեր երիտասարդներին հավաքելով կազմվել է երեք հարյուր հազարանոց բանակ: Ընդունենք, որ տվյալ հազարապետները և հարյուրապետները դարձան զինվորական ղեկավարներ, ապա, ինչպես երևում է, ոչ ըստ գործի թվական միավորների, այլ, ինչպես հիշեցինք, «ըստ տանց տոհմից իւրեանց»: Եթե ընդունենք, որ տվյալ տերմինը թվային իմաստ ունի, ապա ըստ հունարենի և նրա հայերեն պատճենի հազարապետը պետք է լինի 1000-ի պետ. արդյո՞ք դա այդպես է: Այս միտքը ժխտվում է Բ. Մնաց. ԺԷ 14 կոնտեքստով, որտեղ ասվում է. «...և այս էր թիւ նոցա ըստ տանց տոհմիցն իւրեանց: Ի Յուդայի հազարապետք եղնաս իշխան, և ընդ նմա որդիք զօրաւորք զօրութեամբ երեքհարիւրհազար»: Կոնտեքստի շարունակությունում հիշվում են նաև զորքի այլ պետեր, որոնք լուկ իշխան են անվանվում: Ընդունենք, որ նրանք էլ հազարապետներ են և զորքի թիվը խիստ չափազանցված է, սակայն մի բան պարզ է, որ ինչպես «իշխան-հազարապետը», այնպես էլ «իշխան»-ներից ոչ ոք 1000-ի ղեկավար չէ, այլ ավելի մեծ կամ փոքր և ոչ նույնատիպ թվով զորքի ղեկավար:

Բ. Թադ. ԺԸ, 1. Թիւք ԼԱ, 14 և 48 կոնտեքստներում, նույնպես հազարապետները կապված են զորքի հետ, որոնք անվանվում են նաև «վերակացու»,

31 «Տուն նահապետաց»-ը οἶκον πατριῶν-ն է, իսկ πατριά-ն հիմնականում տալիս է՝ տոհմ, ազգ, ցեղ իմաստը: Տե՛ս С. С. Костанян. Термин «шахан» в раннесредневековых армянских источниках.—«Кавказ и Византия», вып. 1, Ереван, 1979, с. 126, табл. I.

«ոստիկան զօրուն», իսկ ոստիկանը Թիւր. ԼԱ, 14-ում թարգմանված է *ἐπι-
χορηγός*-ից, որը նույն վերատեսուչն է: Այսպիսի բացատրությունը մեզ թույլ է
տալիս ենթադրելու, որ վերոհիշյալ հազարապետները զորքի ղեկավարներ
չէին միայն զինվորական իմաստով, այլ գուցե տնտեսական իմաստով, քանի
որ Յուդիթ ԺԴ, 7 (12)-ում առանձնացվում է «զօրագլուխ»-ը «հազարապե-
տ»-ից, ասելով. «...և եկին նոքա առ զօրագլուխս և առ իշխանս և առ հազա-
րապետ նոցա»:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ այն կոնտեքստներում, որտեղ
հազարապետը առնչվում է զորքի հետ, զօրագլուխ չէ, այլ վերատեսուչ *ἐπι-
χορηγός*, և պատահական չէ, որ թարգմանիչների մոտ միայն մի բացատրու-
ն կա, այն է՝ Ա. Մակար. ԺԶ, 19 կոնտեքստը, որտեղ *γυλαργός*-ին տվել են
«զօրագլուխ» համարժեք:

Այն, որ *γυλαργός*-հազարապետը առնչվել է ոչ միայն զինվորական, այ-
լև հասարակական (պետական) ունեցվածքի հետ, մեզ հուշում են Թիւր. ԼԱ
54, 52, Ա Եզր. Ա, 9, Ա. Թագ. Իբ, 7 և Ը, 12 կոնտեքստները, որոնք թեև ոչ
այնքան պարզ, սակայն ենթադրել են տալիս, որ վերոհիշյալները, մասնավո-
րապես Հին Կտակարանի ձևավորման միջավայրում և ընդհանրապես պատ-
մական այդ ժամանակաշրջանում, եղել են պետության գեոևս իրարից չսահ-
մանազատված զինվորական և ոչ զինվորական ունեցվածքի վերակացուներ և
ակտիվ կերպով միջամտել են ինչպես մեկ, այնպես էլ մյուս ասպարեզի կա-
ռավարմանը:

Ահա այսպիսին է հազարապետ-*γυλαργός*-ների առաջ գալու արմատը
ըստ Հին Կտակարանի:

Այն, որ հազարապետները շատ բարձր սոցիալական աստիճան են զբա-
ղեցրել, մեզ հուշում է հետևյալ պարագան. թվարկման ժամանակ թագավորից
հետո հիշվում են հազարապետները (Ա. Մնաց. Ա, 2, ԺԳ, 1), որոնց հետ
խորհրդակցում են Սողոմոն և Դավիթ թագավորները:

Եթե Հին Կտակարանի կոնտեքստների հետազոտման ժամանակ գտանք,
որ զգալի տոկոս են կազմում այն *γυλαργός*-հազարապետները, որոնք այս
կամ այն չափով առնչվում են բանակի հետ, ապա նոր Կտակարանում դա ավել-
ի թույլ է արտահայտվում և միայն Գործք. ԻԱ և ԻԲ գլուխներում հիշվող հա-
զարապետը որոշ չափով առնչվում է բանակի հետ: Մնացյալ կոնտեքստնե-
րում նույն անձնավորությունը, ինչպես նաև այլ անձեր, որոնք ունեն նույն
մակդիրը, հանդես են գալիս որպես պետական պաշտոնյաներ, որոնք մեծ մա-
սամբ կապ ունեն դատական ատյանի հետ և կամ արձակում ու կալանավո-
րում են կասկածելի անձնավորությունների, որոնք մեղադրվում են այս կամ
այն հանցանքի մեջ, ինչպիսին էր Պողոս առաքյալը:

Հին Կտակարանում հիշվող *γυλαργός*-հազարապետները շատ ավելի
հզոր պետության և բանակի հետ առնչվող անձնավորություններ են, քան թե
նոր Կտակարանում հիշվողները: Ծիշտ է. Յայտն. Զ, 15-ում թագավորին հա-
ջորդող իշխաններից առաջինը հիշատակվում է հազարապետը և կամ Մարկ.
Զ, 21-ում Հերովդես թագավորը իր ծննդյան տոնի կապակցությամբ ընդարձակ գոր-
ծունեությունը վկայակոչող փաստի բացակայության պատճառով ենթադրում
ենք, որ պետական խիստ սահմանափակ հզորության պայմաններում սահ-
մանափակվում է նաև վերոհիշյալ ինստիտուտի և նրան գլխավորողների
զործունեության ոլորտը:

2. Հազարապետ—*οἰκονόμος*. Սույն սյունակում գտնվող գալառապետ—
οἰκονόμος, տնտես—*οἰκονόμος* և մնացած բոլոր տարբերակները (ընդամե-
նը 28 կոնտեքստ) ավելի մանրամասն քննարկել ենք «Հաճապ» տերմինի:

առնչությամբ և եկել այն եղրակացության, որ օւփօթօթ-ի հայերեն հիմնական համարժեքներ են հաղարապետը և տնտեսը: Վերջիններիս հետ առնչվող կոնտեքստների վերլուծումից պարզվեց, որ սրանք, իրենց սոցիալական իմաստավորմամբ իրար հետ համընկնելով, որոշակիորեն համընկնում են նաև օւփօթօթ—շահապ-ի հետ, և քանի որ թարգմանիչներին ծանոթ էր մեկը մյուսի պատճեն հանդիսացող շիւթթօթ—հաղարապետ տերմինը, այսուհանդերձ նրանք գիտակցաբար օւփօթօթ-ը թարգմանել են «հաղարապետ», դրանով իսկ նշելով այն տարբերիչ երանգավորումը, որ կա իրենց իսկ կողմից ընտրված «հաղարապետ»-ի երկու հունական առումների միջև:

Բացի դրանից, ինչպես տեսնում ենք աղյուսակից, այս սյունակում, ինչպես և հաջորդներում, թարգմանիչները «հաղարապետ» համարժեքը տվել են հունական այնպիսի տերմիններին, որոնցում իսպառ բացակայում է 1000-ի իմաստը, և եթե մեր հերթական քննարկումից առաջ անցնելով իրար դրամարենք նմանօրինակ տերմինները, ապա ստացվում է հետևյալ հարաբերությունը: Աղյուսակում տերմինների հայերեն համարժեք ունեցող 85 դեպքերից միայն 47-ն ունեն, ինչպես հայերենում, այնպես էլ հունարենում, 1000-ի իմաստավորում, մնացած 38-ից 18-ում «հաղարապետ» համարժեք տրվել է անտեսելով հունարեն բնագրերում թվական իմաստի բացակայությունը: Մնացած 20-ը, չնայած իրենց սոցիալական իմաստավորման համընկնմանը, ոչ հայերենում և ոչ էլ հունարենում թվական արտահայտիչ չունեն, որով կարող ենք ասել, որ թարգմանիչների կողմից, թեև ոչ լրիվ, թարգմանության ժամանակ որոշակիորեն անտեսվել է տվյալ տերմինի թվական արտահայտիչը և ընդգծվել նրա իմաստային երանգավորումները: Այս իրողությունը մեղ հուշում է, թե գուցե «հաղարապետ»-ի թվական արտահայտիչը ինչ-որ շրջանում ունեցել է իմաստ, իսկ ապա ավելի ցայտուն են դարձել այլ ավելի էական իմաստավորումները, որոնց զանազան տարբերակները պարզվում են սույն աղյուսակից:

3. Հաղարապետ— օւփօթօթ —Բ. Մակսիմ ԺԱ, ԺԳ և ԺԴ գլուխներում հիշվող Լիսիասը ԺԱ, 1-ում ստացել է հայերեն և հունարեն վերոհիշյալ համարժեքները և առնչվում է զորքի կուտակման և ուղևորական արշավանքի հետ: Մնացած երեք կոնտեքստներում երկուսում չկա հայերեն համարժեք, իսկ ԺԴ, 2-ում ստացել է «եղբայր» համարժեքը:

Նոր Կտակարանի Գաղատաց. Դ, 1—2 կոնտեքստում ասվում է, թե քանի որ ժառանգը անչափահաս է, պետք է գտնվի հաղարապետ— օւփօթօթ-ի և գառառապետ— օւփօթօթ-ի³² խնամակալության ներքո, իսկ Ղուկաս Ը, 3-ում հիշվածը անորոշ է, ոչինչ չի տալիս:

4. Հաղարապետ— օւփօթօթ —Այս սյունակի չորս կոնտեքստներն էլ գտնվում են Մենդոց հԴ և հԴ գլուխներում և խիստ որոշ կերպով կապվում են տան (պալատի) տնտեսական գործերի հետ: Այսպես, եթե հԴ գլխում երկու անգամ Հովսեփը գիտնում է «ցահարապետն իւր», որպեսզի կարգավորի տան տնտեսության հետ կապված հարցեր, ապա հԴ գլխում, գրեթե իրար հաջորդող կոնտեքստներում, մեկ անգամ նույն անձնավորությունը կոչվում է «հաղարապետ տանն իւրոյ», իսկ մյուս անգամ «վերակացու տանն», որոնք ևս ունեն օւփօթօթ օւփօթ համարժեքը: Ինչպես տեսանք,

³² Պետք է նշել, որ Արմազիում հայտնաբերված երկրեզվյան արձանագրության մեջ օւփօթօթ-ը համապատասխանում է օւփօթօթ-ին, որը ևս գալիս է հաստատելու այս երկու տերմինների գրեթե նույնիմաստ լինելը: Տե՛ս Դ. В. Церетелли. Армазская билингва. Тбилиси, 1941, с. 65—66; О н же. Эпиграфические находки в Мцхете.—«Вестник древней истории», 1948, № 2, с. 57:

Մենդոց զրբի իրար հաջորդող գլուխներում գտնվող սույն կոնտեքստները նըշանակում են պալատի կառավարիչ և թարգմանիչները ընդգծված ձևով, հունարեն մի քանի բառերին տվել են մեկ, այն է՝ «հազարապետ» համարժեքը, կարծես նպատակ ունենալով բացահայտել տերմինի իմաստավորման նաև այն երանգավորումը, որը ունեցել է տվյալ ժամանակաշրջանում:

5. Հազարապետ — ἑξαεταρχός. — Աստվածաշնչում ընդամենը մեկ անգամ «հազարապետ»-ը դիտվել է, որպես տվյալ տերմինի համարժեք և մեր պըրպըրտութը ոչ մի արդյունք չտվեց, քանի որ ἑξαεταρχός-ը իր օգտագործման մնացած օրինակներում հայերենում ստացել է «հաստատել, կացուցանել, գնայցես, կայր, յարեան, կուտել, էր» և այլն, որոնք որպես համարժեքներ ոչինչ չեն տալիս³³:

Տվյալ կոնտեքստը, որը գտնվում է Յուդիթ ԺԲ, 10-ում, իր սոցիալական իմաստով հետաքրքիր է: Խնջույքի պատրաստություն տեսնելու համար ասորեստանցի ղորավարը «կոչեաց ի կոչունս... և ասէ ցրագու ցնեքինին իւր, որ էր հազարապետ հաւատարիմ ՚ի վերայ ամենայն ընչից նորա»: Այստեղ հետաքրքրականը այն է, որ հունարեն ἑξαεταρχός-ին հայերենում մեկ անգամ որպես համարժեք տրված հազարապետը ներքինի է:

Սա գալիս է մեզ հուշելու նաև այն մասին, որ այն հազարապետները, որոնք հիշվում են որպես պալատի կառավարիչներ, ինչպիսիք են ὁ ἐπιτετῆρ οἰκίας համարժեքը ունեցողները, նաև ներքինիներ էին, որոնք ունեին տնտեսական կառավարման մեծ իրավասություններ: Այդ հաստատվում է նաև հույն պատմիչ Կտեսիասի կողմից, որը պարսկական կառավարության մեջ հիշում է «ամենազոր մարդկանց»՝ ներքինիներին, մեկ անգամ (eccl. 46) անվանելով ἄρχαρχοί, որը նույն հազարապետն է և ուղղելով պետք է ընթերցվի ἀρχαρχοί³⁴:

Մեզ հասել է Շապուհ I-ի III դարի եռալեզու արձանագրությունը, որտեղ միջին պարսկերեն § 29 և 31-ում հիշվող hz'rwrt-ը հունարեն § 56, 61-ում ստացել է ἀρχοποι, ἀρχαρχοι համարժեքները: Սույն փաստը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ արքեմենյան շրջանում հիշվող «հազարապետ»-ը թեև պարսկական աղբյուրներում բացակայում է, սակայն անընդմեջ շարունակել է «գործել» ինչպես Պարսկաստանում, մինչև Սասանյանների տիրապետության շրջանը, այնպես էլ Հայաստանում, մինչև հայկական գիր ու դրականության սկզբնավորումը:

Քանի որ սույն տերմինը հայկական վաղ միջնադարյան աղբյուրներում հաճախ է օգտագործվում, պետք է փորձել պարզաբանել, թե ինչպե՞ս է բացատրվել «հազարապետ»-ը վաղ միջնադարի հայ պատմիչների կողմից:

Ազաթանգեղոսի մոտ օգտագործված «հազարապետ» տերմինը բոլոր դեպքերում կապված է աստվածաշնչային մեջբերումների հետ՝ «հազարապետք տանն Յուդայ», որոնք մեկնվում են որպես «հազարապետք խորհրդոցն Աստուծոյ»³⁵:

Պատմիչի մոտ հայ իրականության հետ առնչվող «հազարապետ» չկա, այլ կա «հազարաւորք», որը հետևյալ կերպ է արտահայտված. «Այս իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիրաւորք ի մէջ Հա-

³³ ἑξαεταρχός-ին բառարանում տրվել է начальники власти իմաստը: Տե՛ս Древне-греческо-русский словарь. Т. I, с. 720:

³⁴ Յ. Մարկվարտ. Նշվ. աշխ., էջ 319:

³⁵ Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց. Տիգրիս, 1909, էջ 344:

յաստան աշխարհի տանն թորգոմայ, զորս գումարեաց թագաւորն Տրդատ»³⁶։ Հունարեն Ագաթանգեղոսում «Հաղարաւորքը» ստացել է *γλιεργος*³⁷ համարժեքը, սակայն նրանում առհասարակ բացակայում է «Վարդապետութիւն արքայն Գրիգորի» վերնագրված հատվածը, որտեղ չորս անգամ օգտագործված է «Հաղարապետ» տերմինը։

Փափստոսի «Հաղարապետ»-ը և «Հաղարապետութիւն»-ը կապված են միայն հայ իրականության հետ «եւ սկիզբն գործակալութեան Հաղարապետութեան աշխարհատես խնամակալութեան, աշխարհաշէն աշխարհատած զեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ Հաղարապետն ամենայն երկրին»³⁸։

Սովսես խորենացու մոտ «Հաղարապետ»-ն ու «Հաղարապետութիւն»-ը հրկու երանգավորում ունեն. առաջինը, որը խիստ ընդգծված է, այն է, թե տվյալ ինստիտուտը համապետական նշանակութիւն ունի³⁹։ Երկրորդը՝ որ «Հաղարապետ»-ը կարգված է եղել «զամենայն գործս տանն արքունի»⁴⁰։

Կորյունը «Հաղարապետութիւն»-ը կապում է ամբողջ Հայոց աշխարհի հետ, իսկ մեկ անգամ էլ «Հաղարապետ»-ը՝ հիշվում է «ի ղինուորական կողմանէն, առաջնումն Վահան անուն յազգէն Ամատունեաց, որ էր Հաղարապետ Հայոց Մեծաց»⁴¹։

Սույն կոնտեքստում հիշված «ի ղինուորական կողմանէն, առաջնումն» մեզ ենթադրել է տալիս, որ Վահան Ամատունին առնչվել է նաև ղինվորականության հետ, և գուցե սա աղոտ կերպով հուշում է, որ հայ հաղարապետները ևս ինչ-որ չափով երբեմն առնչվել են բանակի հետ։

Եղիշեն տվյալ տերմինը բազմաթիվ անգամ (20 անգամ) օգտագործելով, շեշտում է, որ հաղարապետը ամբողջ երկրի «վերակացու»-ն էր⁴² և գերագույն պաշտոնյան։ Այդ վերաբերում է թե՛ Հայաստանին, թե՛ «Աղուանից» երկրին⁴³ և թե՛ Պարսկաստանին։ Սակայն վերջինիս տարբերում է, այնտեղի պաշտոնյային կոչելով «մեծ հաղարապետ», որով կարծես շեշտվում է, որ այդ երկրում հաղարապետը ունեցել է ավելի բարձր դիրք և անսահմանափակ իշխանութիւն, որին «այլև ինքն թագաւորն հրամանի նորա անսալը»⁴⁴ և նույնիսկ գերագույն դատավորի դերում էր հանդես գալիս։

Փարպեցին ևս բազմաթիվ անգամներ հիշում է «Հաղարապետ»-ը՝ կապված գերազանցապես Միհրներսէսի հետ, նրան կոչելով «Հաղարապետ Արեաց» և կապում է ամբողջ երկրի կառավարման ղեկի մոտ կանգնած մի անձնավորության հետ։

Պատմիչների վկայութիւնից երևում է, որ Հայաստանում հաղարապետութեան պաշտոնը շարունակվել է նաև Արշակունյաց թագավորութեան անկումից հետո (Վահան Ամատունին, պարսիկ Վեհվեհնամբ)։ Հետագայում, Բագրատունիների գլխավորութեամբ վերականգնված հայկական պետութիւն-

36 Նույն տեղում, էջ 415։

37 Gui Lafontaine. La version Grecque ancienne du livre Arménien d'Agathange. Louvain, 1973, p. 305.

38 Փաւստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1832, էջ 56։

39 Սովսեսի խորենացու Պատմութիւն Հայոց. Տիֆլիս, 1913, էջ 148, 224, 348, 357։

40 Նույն տեղում, էջ 183։

41 Կորյուն. Վարք Մաշտոցի. Երևան, 1941, էջ 92։

42 Եղիշի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 23։

43 Նույն տեղում, էջ 70։

44 Նույն տեղում, էջ 88։

նում, ինչպես նաև Կիլիկիայում, այդ պաշտոնը բացակայում է։ Այս շրջանի պատմիչների մոտ հիշվող «Հաղարապետ»-ները նախկինի հուշերն են, սակայն պահպանել են այդ պաշտոնի ճիշտ իմաստավորումը։ Բերենք մի քանի օրինակներ։ «Ի դառնալն Ապուսէթի յԱսորիս և Մուսէի հաւատալ զվերականգնութիւն հարկաց արքունի, և ընդդէմ եկեալ յարքունուստ հաղարապետ ոմն հարկաց Մովսէի կոչեալ ամիայ Ալայ անուն»⁴⁵։ «...եւ հաղարապետս զհարանաց»⁴⁶։

Խոսելով արևորդիների համայնքի և նրանց սովորույթների մասին, Մխիթար Ապարանցիին ասում է. «...եւ առենն մատաղ ննջեցելոց, և տան զամենայն հաց երիցու. սոցա առաջնորդն կոչի հաղարապետ»⁴⁷։

Միջնադարում, հայ իրականության մեջ հիշվող բոլոր հաղարապետները, ինչպես տեսանք վերոհիշյալ օրինակներում, նույնիսկ պետականության բացակայության պայմաններում պահպանել են իրենց սոցիալական իմաստը, այն է՝ վերակացու, կառավարիչ, տեսուչ։

Հունական և հայկական աղբյուրների, ինչպես նաև հայ վաղ միջնադարյան թարգմանության երախայրիքը հանդիսացող Աստվածաշնչի հետազոտումը «Հաղարապետ»-ի վերաբերյալ մեզ հետևյալ եզրակացությունների հանդեպ է։

ա) «Հաղարապետ»-ը պատմական շատ վաղ շրջանի տերմին է՝ կազմելով «Հաղար» և «պետ» բառերից։ Այստեղ, սակայն, «Հաղար»-ը չունի ստույգ 1000-ի իմաստ, այլ «գերագույն»-ի։ Ուստի գտնում ենք, որ տվյալ տերմինի, ինչպես նաև ինստիտուտի հետազոտման ժամանակ արդարացի չէ հիմք ունենալ միայն թիվ արտահայտող մասը և ըստ այնմ այն տեղափոխել զինվորական և կամ կառավարական մի այլ ապարեզ։

գ) Իր սոցիալ-քաղաքական իմաստավորմամբ սույն տերմինը (և ինստիտուտը) հայկական միջավայրում շատ ավելի մոտ է և գուցե հար և նման պարսկականին, որով կարող ենք ասել, որ այն Հայաստան է մուտք գործել ուղղակի Աքեմենյաններից, առանց հունական միջավայրում եղած սոցիալական փոփոխությունների, որոնցից հայկական «Հաղարապետ»-ը շատ քիչ է ազդվել։

գ) Հաղարապետի՝ երկրի կառավարման մեջ ունեցած ֆունկցիաների մանրամասնությունները պատմության զարգացման ընթացքում միատեսակ չեն եղել, այլ տարբերվել են, նայած մի շարք հանգամանքների, ինչպիսիք են՝ պետական հզորությունը, կառավարման ձևը, բնույթը և միջավայրը. թագավորից հետո նա ունեցել է պետական կառավարման գերագույն կառավարիչի պաշտոն, պալատի տնտեսի իրավունք, գերագույն դատավարություն և

⁴⁵ Թովմայի Վարդապետի Արժրունայ Պատմութիւն տանն Արժրունեաց. Ս. Պետերբուրգ, 1887, էջ 111։

⁴⁶ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 26։

⁴⁷ Ղ. Ալիշան. Հայապատմ. վեներիկ, 1901, էջ 551—552։ Տե՛ս նաև՝ Р. Бартикаян. «Еретики ареворди («Сыны солнца») в Армении и Месопотамии и послание армянского католика Нерсеса Благодатного. «Эллинистический Ближний Восток». «Византия и Иран». М., 1967, с. 104, прим. 7.

մասամբ ներքինապետություն: Զինվորականության հետ առնչվելով հանդերձ, այստեղ ևս հիմնականում ունեցել է տնտեսական կառավարման պաշտոն (ինչպես վկայվում է հույն պատմիչների կողմից), որը հաստատվում է նաև Աստվածաշնչի կոնտեքստային հետազոտման արդյունքով:

О ТЕРМИНЕ «hAZAPET»

С.-А. С. КОСТАНЫН

(Резюме)

Изучение данных армянской историографии раннего периода, в первую очередь всех случаев употребления термина *hazrapet* в армянском переводе Библии, и сопоставление с данными Септуагинты приводит к следующим выводам. а) Термин *hazrapet*, эквивалентом которого является в греческом *χιλίαρχος*,—сложный, он состоит из слов *hazar* букв. «тысяча» и *pet* «начальник», но в этом сложении *hazar* не означает «тысяча», а только «верховный», чем и объясняется его свободное употребление как в военном, так и в административном аспектах. б) В социально-политическом отношении армянский *hazrapet* схож с соответствующим персидским институтом, так как он был введен в Армению непосредственно Ахеменидами, однако в армянской среде испытал незначительное влияние со стороны греческого *χιλίαρχος*-а. в) В ходе исторического развития, в зависимости от ряда обстоятельств, функции *hazrapeta* при управлении страной менялись. Так, будучи вторым лицом после царя, он являлся верховным управляющим страной, заведующим хозяйством царского дворца, верховным судьей и, частично, начальником евнухов. Имея тесные отношения и с военными кругами, он исполнял в основном должность экономического управляющего, что обосновывается как данными, встречающимися у древнегреческих авторов, так и результатами контекстного изучения Библии.